

չարժման անկարելի պիտի լինէր նաեւ ազգութեանց ազատագրական զարթօնքը, պայքարը եւ յաղթանակը: Դեմոկրատիան ազգութեան գլխաւոր հիմքերէն մէկն է, անոր զարգացման կարեւորագոյն պայմաններէն մէկը:

Իսկական դեմոկրատիա եղած չէ ոչ հին, ոչ ալ միջին դարերու մէջ: Եւ այդ պատճառով է, որ ազգութեանց քաղաքական զարգացումն ալ միայն նոր ժամանակի արդիւնք է:

Ոչ մէկ ժամանակ սակայն ազգային շարժումները ունեցած չեն այնքան համատարած, կարելի է ըսել, համաշխարհային ծաւալ, աննախընթաց թափ եւ տիրական ոյժ, որքան մեր օրերուն:

Համեմատական վերջին պատերազմը եւ ուսական մեծ յեղափոխութիւնը ցնցեցին ամբողջ աշխարհը, Արեւմուտքի եւ մասնաւոր Արեւելքի բոլոր ժողովուրդները՝ բոլոր ազգերու ազատ ինքնորոշման նպատակը դնելով իրենց դրօշակին վրայ: Թէ՛ իմպերիալիստական պետութեանց ղեկավարները եւ թէ՛ «համաշխարհային յեղափոխութեան» առաջնակները, հակառակ որ ներկայացուցիչներ էին երկու ծայրայեղօրէն հակամարտ աշխարհահայեցողութեանց, նշանակալից ներդաշնակութիւն մը երեւան բերին ազգերու ազատ ինքնորոշման սկզբունքի վերաբերմամբ:

Երկու ծայրերն ալ կը մրցէին իրարու հետ իրրեւ միակ անկեղծ ու անշահախնդիր պաշտպանները տկար ու յետամնաց ազգերու ազատութեան եւ անկախութեան:

Ճիշտ է, իրականութիւնը տակաւին շատ հեռու է նուիրադործուած դադափարներէն: Սակայն մէկ բան անհերքելի է եւ ակներեւ է վերջին պատերազմի եւ յեղափոխութեան յարուցած ներկայ տակնուվրայութեան մէջ — պատմութեան մէջ աննախընթաց ազգային զարթօնքը բոլոր ժողովուրդներու:

Ամբողջ աշխարհը շարժման մէջ է, անդամ ամենաշատամնաց ազգերը ազատութիւն վնասեցին եւ ազատութեան համար կը պայքարէին: Ոչ միայն Արեւելքի յետամնաց ժողովուրդները, այլեւ Ափրիկէի սեւամորթները հանդիստ չեն այսօր եւ կը ձգտին դառնալ ինքնիշխան ու անկախ:

Եւ ոչ թէ յանուն ընկերային կամ ընկերավարական համաշխարհային իրէջարներու, այլ

յանուն ազգային ազատագրութեան կը մղուի այս պահուստ ժողովուրդներու պայքարը ամէն տեղ — Արեւելք թէ Արեւմուտք, Հիւսիս թէ Հարաւ:

Եթէ 19-րդ դարու շէմքին, Ֆրանսական մեծ յեղափոխութեան զգայացունց ազդեցութեան տակ, անխառն էր որ կը ձգտէր ազատուիլ ամէն տեսակ կապանքներէ, այսօր, 20րդ դարու մէջ, ուսական մեծ յեղափոխութեան շրջանին մէջ, ազգութիւնն է որ ամէն տեղ կը պայքարի իր ազատութեան եւ անկախութեան համար, — ազգութիւնը, իրրեւ քաղաքական միաւոր, իրրեւ վեհապետութեան արդիւնք, իրրեւ ստեղծագործ օրկանական հաւաքակալութիւն:

XII

ԱԶԳԻՐ ՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Մարդկութիւնը իրապէս կ'ապրի այսօր համաշխարհային յեղափոխութեան պրոցես մը: Բայց ոչ դասակարգային իմաստով եւ ոչ համայնատիրական կարգերու ուղղութեամբ, ինչպէս կը հաւատացնեն բոլշեւիկները:

Կոիւր կապիտալիստներու եւ պրոլետարիատի միջեւ չէ, որ կը կազմէ ներկայ շրջանի քաղաքական կեանքի տիրական դիժը, այլ յետամնաց եւ տկար ժողովուրդներու կռիւն է յանուն ազգային անկախութեան որ կը ներկայացնէ գլխաւոր առանցքը ներկայ յեղափոխական շարժումներուն:

Համաշխարհային յեղափոխութեան մղիչ ոյժը այսօր ազգն է եւ ոչ դասակարգը, ազգային դադափարն ու շահը եւ ոչ ընկերային ու ընկերավարական նպատակները:

Չափազանց յատկանշական երեւոյթ մը. կոմունիստները, որոնք պրոլետարիատը, իրրեւ դասակարգ, դարձուցած են պաշտամունքի առարկայ եւ ինքնանպատակ, իսկ դասակարգային պայքարը՝ քաղաքացիական պատերազմ, այսօր ակամայ ամենէն աւելի հզօր թափով կը շարժեն Արեւելքի ժողովրդական զանգուածները դէպի ազգային ազատագրութիւն:

Ընկերային եւ ընկերավարական տեսակէտով կոմունիստներու դործունէութիւնը, ան-